

11.09.2017թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝ Ս.Մասցակյանյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Ա.Սաֆյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան, Ա.Վարդանյան, Լ. Մարկոսյան, Ռ. Պողոսյան, Տ. Գևորգյան, Ա. Քոսակյան

Օրակարգի նախագծում չորս հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Մարկոսյան/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ռ. Պողոսյան/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին

3.1. Հաղորդում Ինդոնեզիա Բալի՝ 2017 թվականի օգոստոսի 6-ից 20-ը ԱՄՆ ՄԶԳ կողմից կազմակերպված «Տարածաշրջանային ընտրանք և ցուցակագրում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Տ. Գևորգյան, Ա. Քոսակյան/

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրատարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ռ. Պողոսյան/

Որոշեցին՝

1. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի հաշվեկշիռ մուտքագրել ստացված՝ ընդամենը 17,293,138 դրամ արժեքով արտադրական և տնտեսական գույքը:

2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի հաշվեկշիռից հանել աղբավայր հանձնված 45,388,512 ՀՀ դրամ արժեքով համակարգչային տեխնիկան և 220,500 ՀՀ դրամ արժեքով արտադրական և տնտեսական գույքը:

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թ.-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված հավելվածի

- 1) 2-րդ տողի «519,113.4» թիվը փոխարինել «473,724.9» թվով,
- 2) 4-րդ տողի «85,234.4» թիվը փոխարինել «102,307.0» թվով,
- 3) «ընդամենը» տողի «723,848.4» թիվը փոխարինել «695,531.5» թվով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3.1. Հաղորդում՝ Ինդոնեզիա Բալի՝ 2017 թվականի օգոստոսի 6-ից 20-ը ԱՄՆ ՄԶԳ կողմից կազմակերպված «Տարածաշրջանային ընտրանք և ցուցակագրում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Տ. Գևորգյան, Ա. Քոսակյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղուման հաշվետվության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ